ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«14» նոյեմբերի 2017թ. № 150-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 91-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 22-ի «Տարվա նախագիծ և կառույց» ամենամյա մրցույթ-ցուցահանդեսի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու ու «Տարվա նախագիծ և կառույց-2017» մրցույթ-ցուցահանդեսի անցկացման և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի ապրիլի 16-ի N 85 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 91-Ա հրամանի «Տարվա նախագիծ և կառույց-2017» մրցույթ-ցուցահանդեսի մրցութային հանձնաժողովի կազմից հանել «Կարեն Ռաշիդյանց ճարտարապետ (համաձայնությամբ)» բառերը:

ՆԱԽԱԳԱՀ՝ Նարեկ Սարգսյան

«14» 11 2017թ.
ք. Երևան